Հյուսիսային համալսարանից Շչեցին՝ ընդամենը մեկ քայլ

Շչեցինի համալսարանի ռադիոյի և հեռուստաստատեսության սուդիայում իրենց մասնագիտական հմտություններն ու կարողություններն են ձևավորում ոչ միայն լրագրության ֆակուլտետի, այլև համալսարանի տարբեր մասնագիտություններ ընտրած ուսանողներ: Նրանցից շատերի համար այս անկյունը դառնում է դեպի լրագրության մեծ աշխարհ տանող ճանապարհի առաջին հանգրվանը:

Ջոաննա Միխալսկան ևս այստեղ է ստացել իր առաջին մկրտությունը և գնալու է իր մեծ նպատակների ետևից:

Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավար Աստղիկ Աբրահամյանի զրույցը՝ Շչեցինի համալսարանի «Լրագրություն և մեդիա կառավարում» մագիստրոսական ծրագրի ուսանող, ռադիոլրագրող Ջոաննա Միխալսկայի հետ:

Լրագրությունը բազմաթիվ ուղղություններ ունի, բայց Դուք դրանց մեջ ընտրել եք ռադիոն: Ինչո՞ւ:

-Ես սկսել եմ իմ պրակտիկան ռադիոյում, երբ դեռ սովորում էի բակալավրիատում: Մինչ այդ ունեի ռադիոօպերատորի փորձ, որն ինձ շատ էր դուր գալիս: Իսկ այստեղ պրակտիկա անցնելուց հետո որոշեցի մնալ և գրեթե երեք տարի է, ինչ աշխատում եմ այս ռադիոյում: Այս ընթացքում շատ բան եմ սովորել այն լրագրողներից, որոնց հետ աշխատելու հնարավորությունն ու հաճույքն ունեմ այսօր:

Ինչպե՞ս է կոչվում ձեր ծրագիրը և որո՞նք են Ձեր նախընտրած թեմաները:

Ես պատրաստում եմ համալսարանական նորություններ՝ անգլերենով, զբաղվում եմ խմբագրական աշխատանքով, հարցազրույցներ եմ վարում Շչեցինի համալսարանի ուսանողների, դասախոսների, «Էրազմուս +» ծրագրի ուսանողների հետ և ունեմ իմ

սեփական՝ գիտական ծրագիրը, որը ստեղծում եմ Շչեցինի համալսարանի դոկտորանտուրայի պրոֆեսոր Նիձվիեցկայի հետ:

Նկատեցի, որ շատ եք սիրում Ձեր աշխատանքը, սիրում եք ռադիոն և նաև հայտնի ու սիրված եք այն միջավայրում, որտեղ աշխատում եք: Ի՞նչ եք պատրաստվում անել ավարտելուց հետո: Պատկերացնու՞մ եք Ձեզ առանց ռադիոյի:

Ավարտելուց հետո ցանկանում եմ շարունակել զարգացնել լրագրողական հմտություններս, ձգտում եմ լինել հնարավոր լավագույն լրագրողը. դա ինձ համար երազանք է: Բացի ռադիոյից, ես կցանկանայի ուժերս փորձել հեռուստատեսությունում, գուցե դառնալ հեռուստահաղորդավար կամ տեսաբան, դասախոս, որպեսզի կարողանամ ապագայում գիտելիքներս փոխանցել ուսանողներիս:

Որքանո՞վ է Ձեզ համար կարևոր ներառական կրթությունը և որքանո՞վ են ֆիզիկական խնդիրներ ունեցող ուսանողները ներգրավված բուհի ակտիվ կյանքում, ինչպես նաև ռադիոստուդիայի աշխատանքում:

Ինձ համար շատ կարևոր է ներառական կրթությունը: Մեր համալսարանը և ռադիոկայանը ֆանտաստիկ են, քանի որ, բացի զարգացման բազմաթիվ հնարավորություններից, մեծապես օգնում են հաշմանդամ ուսանողներին, ովքեր ունեն հետագա կրթության և աջակցության կարիք: Մեր ռադիոն բաց է հաշմանդամություն ունեցող անձանց համար, ովքեր ցանկանում են զարգանալ և աշխատել մեզ հետ. ընդհանրապես, մեր դռները բաց են բոլորի համար:

Արդյո՞ք ռադիոն նպաստում է ուսանողական կյանքի ակտիվացմանը և ի՞նչ ազդեցություն ունի այն ուսանողների վրա:

Անշուշտ, ռադիոն նպաստում է լրագրությունը նախընտրող ուսանողների հմտությունների զարգացմանը. Նրանք հաճույքով գալիս են մեզ մոտ և տարբեր փոդքասթեր են վարում: Կան բազմաթիվ պրակտիկ աշխատանքներ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին հասկանալ, թե ինչպիսին է ռադիոօպերատորի աշխատանքը: Սա մեծ փորձ է յուրաքանչյուր ապագա լրագրողի համար:

Ո՞վ է Ձեզ համար լավ թղթակիցը:

Կենտրոնանալով Լեհաստանի վրա՝ մենք ունենք շատ հայտնի լրագրողներ, շատ բարձր վարկանիշ ունեցող հեռուստահաղորդավարներ, որոնք ինձ համար օրինակ են՝ իմ զարգացման և աշխատանքի մեջ: Ես հիանում եմ հեռուստահաղորդավարներով, ովքեր աշխատում են եռանդով և հարգում են լրագրողի մասնագիտությունը, քանի որ դա դժվար և , ցավոք, թերագնահատված մասնագիտություն է: Եթե կոնկրետ լրագրողների անուններ նշելու լինեմ, կկենտրոնանամ TVN հեռուստաընկերությունից Անիտա Վերների և Գրժեգորժ Կայդանովիչի վրա: Նրանք ինձ համար լրագրողի իսկական օրինակ են:

Արդյո՞ք սոցիալական ցանցերը և սոցիալական լրատվամիջոցները չեն նվազեցրել ավանդական լրատվամիջոցների, ինչպես նաև լրագրողի դերը հասարակության մեջ:

Սոցիալական մեդիան այսօր գրավել է աշխարհն ու մեր առօրյա կյանքը: Ցավոք սրտի, պետք է խոստովանեմ, որ չնայած իրենց ահռելի զարգացմանը, դրանք միշտ չէ, որ նպաստավոր են լրագրության և ավանդական լրատվամիջոցների համար: Հասարակության մի մասն այլևս չի կենտրոնանում դրա վրա՝ հետևելով լրատվության նորություններին և զարգացմանը, ինչն, իհարկե, կարևոր է, բայց չպետք է ստվերի ավանդական լրատվամիջոցների և լրագրողական մասնագիտության ներուժը, որը շատ բան ունի առաջարկելու հասարակությանը:

Ունե՞ք լիարժեք անկախություն ռադիոյի աշխատանքում և կա՞ն գաղափարական տարաձայնություններ Ձեր ղեկավարի հետ: Ինչպե՞ս է լուծվում այդ խնդիրը:

Ես անկախ եմ իմ աշխատանքում, միշտ կարող եմ հույս դնել իմ ղեկավարի օգնության վրա, ով փորձառու լրագրող է: Մեր աշխատավայրում հիանալի մթնոլորտ է, մենք օգնում ենք միմյանց և փորձում ենք հնարավորինս զարգացնել մեր լրագրողական հմտությունները:

Նշեք երեք բան, որ երբեք չեք անի ձեր մասնագիտական կյանքում:

Իհարկե, շատ բաներ կան, բայց եթե ես ստիպված լինեմ ընտրել երեք ամենակարևոր բաները, որոնք երբեք չեմ անի իմ մասնագիտական կյանքում, ես, անկասկած, չեմ կեղծի տեղեկատվությունը, չեմ խախտի գաղտնիությունը և միշտ կձգտեմ ներկայացնել օբյեկտիվ, անաչառ և անկախ տեղեկատվություն :

Շնորհակալություն հետաքրքիր զրույցի համար: Հուսով եմ, Ձեր ռադիոտաղավարում առիթներ կունենաք զրուցելու նաև Հյուսիսային համալսարանից այստեղ սովորող ուսանողների հետ: